

Ա. Ղ. Օ. Թ. Ք. *)

IV

Կրօնական զգացմունքի յաջորդ տատիճանը հանապա-
զօրեայ աղօթքն է, որ կատարուում է առաւօտ և երեկոյ.
ընդհանուր առժամբ դա հետեւեալ մասերից է բացկարած.
արտասանուում են յայտնի աղօթքներ, անցած օրուայ կա-
տարած գործերն են վերստուգում և խնդրուածք են ա-
նում այս կամ այն բարի ցանկութիւններն իրականանա-
լու համար: Այս աղօթքը կատարուում է որոշ գիրք ըն-
դունելով, որոշ շարժումներով, որանց հոգեբանական նշա-
նակութեան մասին մենք արդէն խօսեցինք — գրանք ա-
ռաջ են բերում պայմաններ, որոնք աղօթելու տրամա-
դրութիւն են առաջացնում մարդկանց մէջ: Արտասա-
նուող աղօթքները, գոնէ սկզբում, աւուում են մեքենայօրէն,
ապա աւելի գիտակցաբար և զգացմունքով, մեքենայական
աղօթքի հոգեբանական նշանակութիւնը վերը որոշեցինք,
նա ուշադրութիւնը ուղղելով մի կողմ, գիտակցութիւնը
մաքրում է կողմնակի բոլոր մտածմունքներից և գրանով
ստեղծում է ամենայարմար պայման աղօթքի յաջորդ կա-
յանի համար — երբ մենք ամբողջովին խորատուգուում ենք
ինքներս մեր մէջ և սկսում ենք մտաբերել օրուայ ընթաց-
քում մեր բոլոր կատարածները, վերստուգում ենք մեր
մտածմունքները, մեր ցանկութիւնները և սկսում ենք
գրանց գնահատութեան ենթարկել. մի քանիսը անուանում
ենք յանցաւոր, միւսները՝ արժանաւոր: Այս գնահատու-
թեան միջոցին մենք շարունակ որոշ բարոյական չափի
նկատի ունենք, որի միջոցաւ մենք մեր ամբողջ հոգին
բաժանում ենք երկու մասի — մէկը ստոր այդ չափից,
միւսը համապատասխան նրան:

Այս չափը երկու կողմ ունի. մի կողմով մենք պատ-
կերացնում ենք Աստծուն, միւս կողմով՝ մեզ իբրեւ անձն,
որ ձգտում է համապատասխանուլ Աստծու պահանջներին:

*) Տես «Արարատ» № 2, 3.

Հոգեբանական տեսակէտով Աստուած է յայտնի բարոյական սկզբունքի արտայայտութիւն, մեկնակարող էակ—ամենողորմած, արդարագատ, պահանջող անպայման իր պատգամների կիրառութիւնն, այս տեսակէտից Աստուածը մարմնացումն է մեր խղճի բարոյական բոլոր պահանջների, որ մենք մեզ պարտաւոր ենք զգում ի կատար տանելու ճատերի մօտ այս հարուստ երեակայութիւնը պայծառ պատկերաւոր բնաւորութիւն ունի, որի բովանդակութիւնը համապատասխանում է աղօթողի անհատական մտաւոր մակերևոյթին։ Աստծուն երեակայում են և աներևոյթապէս և ներկայացնում են մարդու կերպարանքով խոժոռ, խիստ ծերունի, կամ այլ կերպարանքով մինչև կռապաշտական փայտէ կուռքը—Ֆետիշը։

Ինչ վերաբերում է վերոյիշեալ բարոյական չափի միւս կողմին—մեր անձին—որ ձգտում է համատասխանել Նրա պահանջներին, հոգեբանական տեսակէտից դա բարոյական իդէալի հեռանկարն է, դէպի ուր մենք ուղղում ենք մեր բոլոր ուժերը, միտքը, ցանկութիւններն ու զգացմունքները։ Սա այն հեռանկարն է՝ ինչ որ մենք մեզնից պահանջում ենք ձեռք բերել, այն ձգտումն է՝ թէ ինչ պիւլինենք մենք, այն մտածմունքն թէ՝ մեզ համար աւելի թանկ, սուրբ, անգնիւ ու գեղեցիկ է մեր հոգու սրբութիւն սրբոցը, այստեղ մենք մեզ երեակայում ենք, մտածում ենք մեր Եսի մասին, բայց ոչ այն յանցապարտ Եսի, որը գուցէ և զգուելի է մեզ և անդուր, որն արդէն գոյութիւն ունի իւր բոլոր թուլութիւններով ու անկարողութիւնով, ոչ, այս Եսը այն նպատակն է, որին մենք ձգտում ենք, ցանկալի մեր իդէալական Եսը, որին այդպէս էլ այսուհետեւ կանուանենք զանազանելու հպմար իրական (էմպիրիքական) Եսից։ Մի քանի կրօններում Աստուածը և իդէալական Եսը ընդունուում են տարբեր, երբ առաջինը պայմանաւորւում է երկրորդով, մի քանիսի մէջ գոյութիւն ունի բարոյական չափի միայն մի կողմը, վերջապէս կան կրօնական աշխարհայեցողութիւններ, ուր Աստուածն ու Եսը ձուլւում են ի մի։ Բարոյական գնահատութեան

բովանդակութիւնն ու բնաւորութիւնը պարզաբանում է Աստծու և այն պահանջների եղած հասկացողութեամբ, որը պահանջում է մարդուց. իսկ այդ հասկացողութիւնը տարբեր է. վայրենու համար Աստուածը նոյնքան վայրէջի է, որքան ինքը, միայն աւելի ուժեղ, աւելի ճարպիկ է, այդ պատճառով նա աշխատում է բարեհաճ դարձնել Աստծուն, ընծայարբերութիւններ է անում. որպէսզի խնդրի իր համար յաջողութիւն և բաղդաւորութիւն, աստծու շրթունքները օծում է իւզով, դնում է նրա համար համեղ պատառներ և ինչ եթէ աղաչանքը չի կատարւում, նրան պէտք է ծեծել, որ ապագայում աւելի լաւ և բարի լինի. Այդպէս է կռապաշտութիւնը, այստեղ բարոյական պարտքի, աղօթքի մասին, որ ինչպէս մենք ենք հասկանում, հարկ չկայ խօսելու:

Յին ազգերի—Ասորոց, Բաբելաոց, Փիւնիկեցոց համար Աստուածը սարսափելի, խիստ արարած է, բռնակալ և կամակոր. նրա և մարդու մէջ վիճ կայ, որովհետեւ մարդը միանգամայն չնչին, ոչինչ արարած է. նրա աղօթքը միայն խոնարհ աղաչանքէ թողութիւն և զոհաբերութեամբ ողորմածութիւն հայցող. իսկ կրօնը և բարոյականութիւնը դառնում են միայն իսկապէս յարատեւ կատարումն այն պահանջների, որոնց փոխարէն կարելի է թողութիւն ստանալ այս սարսափելի աստծուց. Իրերի այս դրութեամբ մարդու իդէալական ետը որոշում է Աստծուց, կրօնից անկախ, որովհետեւ այնպիսի հրէշը չի կարող մարդու իդէալը լինել, այլ միայն նրան վախեցնող խրտուիլակը:

Հրէաների աստուածը, որ նկարագրուած է որստալից և փայլակնացայտ Սինայի պատգամների մէջ, իմաստուն է, արդարութեամբ ղեկավարում է մարդու բաղդը, պահանջում է սկնդրութիւն և հնազանդութիւն և դրա փոխարէն վարձագրում է. իւր հեղինակութեան դէմ յանդըհնութեան և անհնազանդութեան համար դատում և պատժում է. Այսպիսի հասկացողութեամբ Աստծու—գերազոյն արդարութեան սկզբունքների և բարոյականութեան ու

մարդու մէջ գտնուած անդունդը դառնում է անանցանելի¹⁾

Պատգամներով և օրէնքներով որոշուած մարդու իդէալը միայն բացասական է²⁾, տրւում է արտաքուստ և բռնի ուժով, հեղինակութեամբ: Հրէի ազօթքն է միայն ներանձնացումն, վերստուգումն թէ ինչ չափով կատարուած են Աստծու բոլոր պահանջները:

Պատմական յոյնի համար չկային սարսափելի, անմատչելի աստուածներ. յոյնը ոչ ոքից չէր վախենում, ոչ ոքի չէր ենթարկւում. նրա համար միակ աստուածը ինքը մարդն էր իւր իդէալական, ամենագեղեցիկ, ամենաներգաշնակ արտայայտութեամբ: Ողիպսոսը բնակեցրած էր մարդկային զանազան դադափարական տիպերով, որոնք մարմնացնում էին մարդկային բնաւորութեան զանազան ամենագեղեցիկ կողմերը:

Հելլենի (յոյնի) բարոյական չափը իւր իդէալական եսն էր, որը ոչ մի բանով չէր պայմանաւորւում, բացի այն, որ պահանջւում էր լինել մարդ par excellence (գերազանցապէս): Նրա ազօթքն էր ձգտումն դէպի այդ իդէալը, հիացումն և սքանչացումն այդ իդէալով³⁾:

Քրիստոնէական հասկացողութեամբ Աստուած է մի կողմից հրէական պատկերացումն անողորմ Աստծու, բարոյական պարտքի, միւս կողմից յունական դադափարական մարդու «եղերուք կատարեալ, որպէս կատարեալ է հայրն ձեր երկնաւոր», ահա քրիստոնէութեան բարոյական սկզբը:

1) Յիսուս Քրիստոսի առաքելութիւնն նպատակ ունէր լցնել այդ անդունդը, մօտեցնել մարդուն Աստծուն:

2) Բացասական որոշումն նշանակում է ցոյց տալ թէ ինչ չափաւր է անել. այդ հասկացողութեան համապատասխանում են «Այ՛ սպանաներ», «մի՛ գողանար» և այլն դարձուածները:

3) Յունական և հրէական կրօնների տարբերութիւնը անգրագասնում էր նաև նրանց ծիսակատարութեան վրա հրէան ծածկում է գլուխը թիկնոցով, որ արտաքին աշխարհով չգրաւուի և աւելի ներանձնանայ, յոյնը ընդհակառակը, շեշտակի նայում է կապոյտ երկնքին, կարծես ցանկանալով տեսնել գեղեցիկ Աստուածն և միանալ նրան:

բունքի հիմունքը: Յիսուս Քրիստոս է այս հասկացողութեան գործնական իրականացումն, միաւորումն Աստծու և կատարեալ մարդու: Այսպիսի հասկացողութեամբ այլևս չկայ անջրպետ Աստծու և մարդու մէջ: Աստուածն ու մարդու իդէալական եւր համանման են, ամեն մի մարդու հոգու մէջ գտնուում է սաղմը և հնարաւորութիւնը գերազոյն կատարելութեան հասնելու, անսահման ձգտումն դէպի Աստուած — դէպի իդէալական եւր, այս պատճառով էլ նկատուում է Քրիստոս թէ՛ «Արքայութիւնն ի ներքս ի ձեզ է», որովհետեւ քրիստոնէի տմբողջ կեանքը պէտք է լինի իրականացումն այն աստուածային իդէալի, որի սաղմը գտնուում է նրա հոգու մէջ: Քրիստոնէի աղօթքի էութիւնը նրանումն է կայանում, որ նա վերլուծում է և գնահատում մարդու գործունէութիւնը թէ՛ որքան նրա արարքը համապատասխանում է իր իդէալին: Մարդը ունայնութեան յորձանքներում, մանր և ցոփ նեանքում տարուբերուելով, աղօթքի ժամանակ ազատուում է դրանից, հեռանում է մի առ ժամանակ կենսական հոգսերից և ամենօրեայ զբաղմունքներից, սկսում է քննադատօրէն դիտել թէ՛ արդեօք իր կեանքը ցանկալի նպատակից շատ հեռու չի քշել իրան, չի դադարել ինքն իր նման լինելուց, իր համար սահմանածից ստոր չի կանգնած: Եւ ահա՛ մարդը վերլուծում է, գնահատութեան է ենթարկում իր արարքները, ցանկութիւնները, զգացմունքները, որակում է նրանց, այսպէս առած, յանցաւորներն ու արժանաւորները, սովորում է ինքն իրան հասկանալ և ուսումնասիրել իր թոյլ կողմերը և գնահատել զօրեղ կողմերը: Շնորհիւ այսպիսի ամենօրեայ հոգոյ «մաքրութեան», մշտական ինքնահաշուետւութեան և իր հոգեկան ել և մուտքի սովորական ստուգութեան, մարդը ձեռք է բերում իր վարքի գերազանց կանոնաւորող գործիքը, որը թոյլ չի տալիս նրան կեանքը քամահարել, բայց օգնում է նրան միշտ յաղթող լինել, միշտ անձնապէս ապրել կեանքում և հասնել իր ցանկութիւններին — մարմնացնել իր իդէալական եւր:

Սրանով է որոշուում ամենօրեայ աղօթքի ինքնաքննա-

դատութեան և ինքնավերլուծութեան հոգեբանական նշանակութիւնը:

Որովհետեւ, շնորհիւ շարունակ գործածութեան, այսպիսի աղօթքը դառնում է սովորական—երկրորդ քնութիւն—ապա նրա նշանշանակութիւնը կեանքի համար դառնում է էլ աւելի կարեւոր:

Աղօքի մէջ մտնում են նոյնպէս զանազան խնդրուածներ ի կատար ածելու այն, ինչ որ մարդ համարում է աւելի թանկագին, ինչ որ նպաստում է նրա հոգեկան կեանքին և բաւականութիւն է տալիս նրա իդէալական Նսին: Հոգեբանական տեսակէտով այս խնդրուածքը ուրիշ բան չէ, բայց եթէ զեղուն, բուն զգացմունքով պատկերացումն, որի վրա կենդրոնանում է ամբողջ ուշադրութիւնը, որի վրա կենդրոնանում է ամբողջ իմացականութիւնը, բոլոր ձգտումները, մի խօսքով ամբողջ հոգին, ամբողջ մարդը իւր գերագոյն կողմերով, այլ խօսքով, մարդու իդէալական Նսը ամբողջովին ընդգրկում է նրա հոգին:

Աղօթքի այսպիսի վայրկեանում իդէալական Նսի մասին մտածումները յափշտակում է աղօթող մարդու ամբողջ հոգեկան կողմը. աղօթքի միջոցաւ աղաչանքներով մարդ կենդրոնանում է իւր բոլոր մտքերով, ձգտումներով, զգացմունքներով, այդ պատճառով էլ այն պատկերացումն, որ նա ստանում է այդ ժամանակ լի ու լի ներկայացում է իր իդէալական Նսը, և սա ոչ միայն սոսկ մտածումն է մնում, այլ ձգտում է դառնալ մի շարք գործողութիւն, իրականանալ և դառնում է մարդու ապագայ գործողութիւնների ելակէտ: Պատկերաւորման ամբողջութիւնը կապուած իդէալական Նսի իմաստով, շնորհիւ ամենօրեայ աղօթքի, աւելի ու աւելի արմատանում է գիտակցութեան մէջ, վանում է բոլոր կողմնակի, ցոփ, կենսական, յանցաւոր գաղափարները դէպի յետին շարքը և աւելի ու աւելի ուժեղ կերպով ազդում է մարդու բարբի վրա, որովհետեւ սկզբում ձգտելով, ի վերջոյ հասնում է մի շարք սովորութիւն դարձած բարի գործողու-

Թեանց, Ամենօրեայ աղօթքի մէջ մարդ վարժուած է դիտել իւր ամբողջ կեանքը իր իդէալի տեսակէտով, շարունակ կենդրոնանում է նրա մէջ իր մտքերով, տրամադրութեամբ, այդ պատճառով տարիների ընթացքում ամենօրեայ աղօթքի մէջ ընդունած բոլոր մտածմունքները անցնելով իդէալական եօի պրիզմայի միջով, ստանում են նոր կեպարանք, բոլորը, ինչ անհամապատասխան է մերժւում է, բոլորը, ինչ որ մարդու գլխաւոր նպատակներին համապատասխանում է՝ զօրեղանում է, որովհետեւ ամուր կապերով միաւորւում է տեական, գլխաւոր հոգեկան յատկութեան հետ—իդէալական եօի հետ:

Այս պարագաներում նա ձեռք է բերում զօրեղ ազդեցութիւն մարդու ամբողջ մտքի, զգացմունքի, գործունէութեան վրա, ուղղում է նրանց դէպի իրականացումն այդ իդէալների, ինչ որ նա կեանքի մէջ նպատակակէտ է դրել իրան:

Այս տեսակետով աղօթքը նմանում է այն միջոցին, որ Լեվի (Lévy) անուանում է ներանձնացումն, իսկ Պէյօն (Payot) անուանում է ներանձնական խորհրդածութիւն, երկուսն էլ առաջարկում են այս միջոցը կամքի դաստիարակութեան համար:

V

Ջերմեռանդ և ուշադիր աղօթքը վարձատրում է աղօթողին կրօնական զգացմունքի հաստատութեամբ: Առանձին բարձրութեան է նա հասնում, ինչպէս մենք ասացինք վերը, եկեղեցում, երբ կատարւում է հանդիսաւոր ժամերգութիւն, երբ լսում է քաղցրաձայն երգեցողութիւն, որ զարթեցնում է մարդու մէջ վեհ զգացմունքների յորձանք: Սա պաշարում է ամբոխին, անցնում է մէկից միւսին և այս միջոցին զօրեղանում է մեծ չափով: Այն ժամանակ նա դառնում է մի առանձին հաւաքական զգացմունք, որ ամբոխին պատկանելով իբրեւ մի անձի՝ կլանում է անհատական զգացմունքները: Շատ ազանդաւորների մօտ այս ընդհանուր զգացման ամբողջութիւնը

կենդրոնանում է ներկայ եղողներից մէկի վրա, որն աւելի շուտ և շատ է ստանում ընդհանուր տրամադրութիւնը, այն ժամանակ նա զգում է, որ ստացել է ու հոգին և սկսում է քարոզել։ Ամենօրեայ անհատական աղօթքն էլ առաջացնում է կրօնական զգացմունքի յորձանք, երբեմն զօրեղ և երբեմն թոյլ։ Ամեն մի զգացմունք, ամեն մի յոյզ հոգեկան ուժ է, որ ձգտում է մի որևէ գործողութեամբ, ընթացքով արտայայտուել։ Ամենօրեայ աղօթքն է հոգեկան ուժի տեական ամենօրեայ աճեցողութիւն, որն պարբերական կուտակումն է ժողովելով ու թանձրանալով օր օրի վրայ, այս եռանդը պէտք է յայտնի եղանակով ազդի հոգեկան բոլոր գործողութիւնների վրա, պէտք է արտայայտուի այս կամ այն գործողութեամբ։

Իսկ ինչ վերաբերում է երեակայութեան, մտածմունքների, գաղափարների, աղօթքի զգացմունքը ամենից ուժեղ կենդրոնանում է աղօթքի մէջ արտայայտուող գաղափարների շուրջը, իսկ մենք արդէն գիտենք, թէ ինչ գաղափարներ են կենդրոնական տեղ գրաւում աղօթքի մէջ—այն բոլորը, ինչ վերաբերում է իդէալական եսին։ Այն բոլոր մտապատկերները, որոնք կապուած են նրա հետ, կարծես աւելի ուժ են ստանում շրջապատող զգացմունքների յորձանքներից, առաջնակարգ տեղ են գրաւում յետ մղելով դէպի անգիտակցութեան խորքերը ամեն մանր, յոռի, յանցաւոր բան և այդպիսով իդէալական եսը զօրեղանում է և աղօթողի հոգեկան աշխարհում գլխաւոր տեղ է բռնում։ Այդպիսով աղօթքի յուզիչ կողմը օժանդակում է գաղափարի տարբերութեան և իդէալական եսի զօրեղացման նկատմամբ, այսինքն օժանդակում է այդ գաղափարներին ընդհանուր հոգեկան գործողութիւնների մասսայից առանձնանալ և աւելի պարզ գիտակցական լինել։

Ինչ վերաբերում է աղօթողի գիտակցութեան մէջ գտնուած առձեռն զգացմունքներին, շնորհիւ նոր կրօնական զգացմունքների, առաջ են գալիս նոր փոփոխութիւններ, այն բոլոր յոյզերը, որ մարդ ունեցել է օրուայ ընթացքում և չի սպառել, աւելի ուժեղանում են աղօթքի

տրամագրութեան նոր յորձանքներով և կրկին առաջ է գալիս նոր փոփոխութիւն, կրօնականին մօտ զգացմունքները ձգւում են ինչպէս մագնիս դէպի մի աւելի զօրեղ զգացմունք և այսպիսով ուժեղանալով արտայայտւում են աւելի ուժեղ թափով: Իսկ հակադիր — յանցաւոր, ստոր կրքերը, մանր գրգիռները նսեմանում, կորցնում են իրանց սուր բնաւորութիւնը և ի վերջոյ անհետանում են:

Ուրեմն այս տեղ աղօթքը նպաստում է զգացմունքների տարբերելուն, աղօթքը դառնում է աւելի ամբողջական, կատարեալ իմացականութիւն Աստծու, իգիալի մասին և ձգտումն տէպի նա:

Հետեւեալ աղօթքի ամենօրեայ կրկնութեամբը, որ հետզհետէ սովորութիւն է դառնում, կրօնական գաղափարներն ու զգացմունքներն էլ հաստատուն և խոր են դառնում, հետեւանքը լինում է այն, որ մարդու ամբողջ բնաւորութիւնը յայտնի կողմ է թեքւում: Աղօթքի հոգեբանական էութիւնը միանգամայն համապատասխանում է Պէյօի մեթոդին, որն առաջարկում է նա կամքի դաստիարակութեան համար: Նա ասում է. «մեր նպատակն այն է, որ համբերութեամբ, քայլ առ քայլ գտնենք այն ամենը, ինչ որ կարող է մեր հոգու մէջ զարթեցնել սիրոյ և ատելութեան յոյգ. մեր նպատակն է վերահաստատել ամուր կապ այս ինչ գաղափարների, այն ինչ զգացմունքների մէջ... Մենք պէտք է աշխատենք, որ մտքերն ու զգացմունքները, որոնք յարմար են մեր նպատակների համար, մեր հոգու մէջ կարգաւորուեն, որպէսզի այն, ինչ որ միայն վերացական գաղափար է, դառնայ կենդանի տաք համակրանք... Եթէ քիմիական մի քանի նիւթերի յագեցած լուծուածքի մէջ ընկղմենք բիւրեղը, ապա այս բիւրեղին համասեռ մասնիկները ձգողական խորհրդաւոր ուժի ազդեցութեամբ բաժանուելով հեղուկից հեռզհետէ կը խմբուեն նրա շուրջը: Բիւրեղը կամաց կամաց կաճի և եթէ լուծուածքը հանգիստ մնայ շաբաթներ և ամիսներ, ապա կը ստացուի այն հոյակապ նմուշներից մէկը, որ իր դեղեցկութեամբ և մեծութեամբ կկազմի քիմիա-

կան լաբարատորիաների պարժանքը... Նոյնն է և հոգեբանութեան մէջ: Վերջրէք որ և է հոգեկան դրութիւն, ձեր գիտակցութեան մէջ առաջին տեղը դրէք և այդպէս պահեցէք երկար ժամանակ և կտեսնէք որ աննկատելի կերպով, ինչ որ խորհրդաւոր միջոցով նրա շուրջը կկամբուեն նրան համասեռ յոյզեր և գաղափարներ»:

Աղօթքը, ինչպէս մենք տեսնք, է բիւրեղի ամենօրեայ ընկղմումն—խոհեր Աստծու, իդէալական եսի մասին, սրա զօրեղացումն գիտակցութեան մէջ եղած համասեռ բոլոր գաղափարների միաւորմամբ:

Այսպիսով ամբարուած հոգեկան եռանդը դառնում է ուժի աղբիւր, որից մարդ ստանում է իր ուժն ու կարողութիւնը, որ արտայայտում է հետեւեալ ձևով.—

1. Որքան ուժեղէ որոշ տեսակի զգացողութիւն, այնքան թայլ է հակառակ տեսակը: Որովհետեւ աղօթքը հաւաքում է մարդու հոգու մէջ կրօնական զգացմունքը, ապա այս նշանակում է որ միւս զգացմունքները—ստոր կրքերը, անասնական հակումները և այլն աւելի ու աւելի նսեմանում են: Կուսակրնօների կեանքը, որոնք կատարելապէս սպանում են իրանց մէջ մարմինը, ինքնասիրութիւնը, և այլ յանցաւոր կրքերը, կարողէ դրան ապացոյց ծառայել: Որովհետեւ աղօթքով կարելի է ըստ ցանկութեան առաջ բերել կրօնական տրամադրութիւն և խեղդել ոչ ցանկալի յոյզերը, ապա այդ տեսակէտով նա դառնում է տրամադրութիւնը կանոնաւորող միջոց և ինքնակրթութեան գերազանց մէթոդ: Հոգու իշխումն մարմնի վրա, չվրդովէլլովեհ անդորրութիւն, ահա նրա հետեւանքները և սուրբ մարդկանց, աղօթարարների սովորական առանձնայատկութիւնը:

2. Ամենօրեայ աղօթքով հոգեկան եռանդի պաշարի անընդհատ լրացումն կարող է կրօնական մարդու ուժը հասցնել զարմանալի չափերի, կարողէ սիրտը լցնել օգեութեամբ, և բարձրացնել նրան մինչև հերոսական գործողութիւնները: Երբ հասնում է գործ կատարելու ժամանակը, երբ նա պիտի իրականացնի այն ձգտումները,

որոնցով լի էր նրա հոգին աղօթքի ժամանակ, այս կրօնական յոյզերի պաշարը մարդուն աալիս է երկաթէ կամք, աննկուն քաջութիւն, հերոսական ուժ — այն ժամանակ անկարելին կարելի է դառնում. երկչոտ առաքեալները, որոնք Յիսուս-Քրիստոսի ձերբակալութեան ժամակ փախան, Աստուածային փառքի անվեհեր քարոզիչներ դարձան, երբ խմբական աղօթքի ժամանակ զգացին, որ իրանց վրա իջել է Հոգին Սուրբը. Մոռացուած ստրուկները ժպտեալ գնում էին մեռնելու աղօթելով նոր Աստծուն — Քրիստոսին: Բաւական է յիշել քրիստոնէութեան առաջին դարերի ընդարձակ Գողգոթան, հալածանքի, տանջանքների, սպանութեանց, նահատակումների ժամանակները, որպէսզի հասկանալի լինի և գնահատուի աղօթքի և սրան յարակից կրօնական ոգևորութեան ամբալնդող և բարձրացնող ուժը:

3. Ամբարուած հոգեկան ուժերը կարող են ուրիշ ձևով էլ արտայայտուել. աղօթքի տրամադրութիւնը գնալով լայնքով և խորութեամբ ամբողջութեամբ տիրում է հոգուն և ուղղում նրա բոլոր գործողութիւնները, առանց մարդու կողմից որևէ տշխատանքի, դէպի մի կողմ — դէպի իդէալի մարմնացումն. այն ժամանակ մարդ հակառակ իւր կամքի, սկսում է եւ մտածել եւ գործել միևնոյն ուղղութեամբ, ձեռք է բերում զարմանալի ունակութիւն և տոկունութիւն. այդպէս են անապատական քարոզիչները, մենակեացները, հաւատի նախանձաւորները և այլն, որոնց մասին մենք յիշեցինք վերը (գլ. I): Նրանք անընդհատ ևռանգուն գործունէութեան մէջ էլ ապրում էին մինչև խոր ծերութիւն, պահելով իրանց ուժը, թէ և ապրում էին մշտական զրկանքներով, պահքով և սոսկալի հակառողջապահական պայմաններով:

4. Ի վերջոյ լինում են և սրտառուջ կամ մշտական ուրախ տրամադրութիւն. Այս տրամադրութիւնը գերադոյն աստիճանի հասնելով սկսում է արտայայտուել յուզիչ արտասուքով և վառ ձգտումով դէպի Աստուած, դէպ «այլ աշխարհ»: Այս ողբը վանքերում համարում է վերին

աստիճանի կատարելութիւններէց մէկը: Հոգին այնքան լի է լինում դէպի Աստուած սիրով, որ մարդ բոլորովին հրա-
ժարում է իւր իրական Եսից, անզգայ է դառնում նրա
տանջանքների նկատմամբ, նոյն իսկ ցանկանում է այդ,
որպէսզի դրանով մաքրուի և մօտենայ իդէալականին,
Աստծուն:

Այսպէս ուրեմն, աղօթքը, որ չափով որ մենք ի նկա-
տի ենք ունեցել նրա ազդեցութիւնը մարդու կեանքի
յոյգերի վրա, պէտք է ճանաչուի ամենալաւ դաստիարակ-
չական մեթոդ. յոյգերի զարգացման համար, չափազանց
օգտակար միջոց ուժեղացնելու ցանկալի և ճնշելու ոչ ցան-
կալի յոյգերը և առհասարակ շատ գործնական միջոց ու-
ժերը որոշ ուղղութեամբ կենդրոնացնելու և օրանով առ-
հասարակ աշխատելու ընդունակութիւնը մեծացնելու
համար:

Պ. Երջ

